

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԾՐԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ**

**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի  
նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**

**որպես Պատվիրատու**

**«ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

**որպես Խորհրդատու**

**Ակադեմիական քաղաք հիմնադրամ**

**որպես Շահառու**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ** (այսուհետ՝ «**Պայմանագիր**») կնքվել է 2025թ.-ի ապրիլի 11-ին հետևյալ կողմերի միջև.

- (1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ** (այսուհետ՝ «**Պատվիրատու**»)՝ իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Օրբելի եղբայրների փող. 22՝ ի դեմս նախագահ Մարգիս Հայոցյանի (նույնականացման քարտ համար՝ 011564788), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա,
- (2) «**ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ**» **ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** (այսուհետ՝ «**Խորհրդատու**»)՝ Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն հիմնադրված և գործող ընկերություն, ընկերության գրանցման համար՝ 273.110.05120, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Աջափնյակ, Մարգարյան փ., 7 շ., բն. 47՝ ի դեմս տնօրեն Իսահակ Ներսիսյանի (նույնականացման քարտ համար՝ 014835862), որը գործում է Խորհրդատուի կանոնադրության հիման վրա,
- (3) **ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ** (այսուհետ՝ «**Շահառու**»)՝ գրանցման համար՝ 222.160.1315877, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Աշտարակ 0204, Գիտավան-2՝ ի դեմս տնօրեն Արմեն Սիմոնյանի (նույնականացման քարտ համար՝ 010663086), որը գործում է Շահառուի կանոնադրության հիման վրա:

Պատվիրատուն, Խորհրդատուն և Շահառուն այս Պայմանագրում երբեմն առանձին կոչվում են «**Կողմ**», իսկ միասին՝ «**Կողմեր**»:

**ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՈՐ**

- (i) Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «**Կառավարություն**») նախաձեռնել է Ակադեմիական քաղաքի ծրագրի (այսուհետ՝ «**Ծրագիր**») նախագծումը, կառուցումը և զարգացումը:
- (ii) Գնումների ընթացակարգի արդյունքում Կառավարությունը, 2025 թվականի հունվարի 23-ի թիվ 59-Ա որոշմամբ, հաստատել է Ծրագրի իրականացման համար Խորհրդատուից Ծրագրի համար գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթի պատրաստման ծառայությունների ձեռք բերումը՝ մեկ անձից գնման ընթացակարգով:
- (iii) Խորհրդատուն նախագծային ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որն ունի Պատվիրատուին և Շահառուին ստորև սահմանված Ծառայությունները մատուցելու տեխնիկական հնարավորություններ:

**ՈՒՍՏԻ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.**

**1 Պայմանագրի առարկան**

Սույն Պայմանագրի համաձայն՝ Խորհրդատուն համաձայնում է Պատվիրատուին մատուցել ջիւնփի ինթերնէյշնլ Ջիւնփիէյջ արքիթեքթս ընդ էնջինիերս ընկերության (այսուհետ՝ «Նախագծող») կողմից 2024թ.-ի հուլիսին Ծրագրի համար ներկայացված՝ գլխավոր հատակագծի հայեցակարգի հիման վրա՝ դրա մինչև 2025 թվականի հուլիսը ներառյալ կատարված հնարավոր փոփոխություններով հանդերձ, գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթի պատրաստման մասնագիտական ծառայություններ և ցանկացած օժանդակ ծառայություն, ինչպես սահմանված է ստորև՝ 2-րդ հոդվածում, իսկ Պատվիրատուն համաձայնում է վճարել այդ ծառայությունների համար:

**2 Ծառայությունների նկարագիր**

**2.1 Ծառայությունների շրջանակը**

Խորհրդատուն պետք է մատուցի Ծրագրին առնչվող այնպիսի ծառայություններ, որոնք սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) (այսուհետ՝ «**Ծառայություններ**»): Ծառայությունները բաղկացած են՝

- (1) հիմնական ծառայություններից, և
- (2) հետևյալ լրացուցիչ (կամ ընտիր) ծառայություններից, որոնք պետք է մատուցվեն միայն Պատվիրատուի գրավոր հանձնարարության հիման վրա՝ (ա) էլեկտրասնուցման արտաքին գծի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի մշակման աշխատանքներ, (բ) արտաքին գազամատակարարման ցանցի նախագծերի մշակման աշխատանքներ, և (գ) խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի նախագծերի մշակման աշխատանքներ:

**2.2 Ծառայությունների մատուցման տարածքը**

Ծրագիրը պետք է իրականացվի և Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի համար նախատեսված Հայաստանի Հանրապետություն, Երևան, 17-րդ թաղամաս հասցեով գտնվող տարածքում, ինչպես նաև բացառապես տեղակայման և տրանսպորտային կապի մասով Հայֆիլմի տարածքում, ինչպես նկարագրված է սույն Պայմանագրի Հավելված 2-ում (*Նախագծի տարածք*):

**2.3 Ծառայությունների շահառու**

Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի իրականացման շրջանակներում և ի շահ Շահառուի:

**2.4 Խորհրդատուի պարտականությունները**

Խորհրդատուն պարտավորվում է Ծառայությունները մատուցել և Պայմանագրով նախատեսված՝ իր պարտավորությունները կատարել բարեխղճորեն, արդյունավետորեն և խնայողաբար՝ ընդհանուր կերպով ընդունված մասնագիտական պահանջներին և պրակտիկային համապատասխան, և պետք է որդեգրի կառավարման որակյալ գործելակերպ և աշխատանքի ընդունի որակավորված անձնակազմի: Խորհրդատուն պետք է սույն Պայմանագրին կամ Ծառայություններին վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ միշտ հանդես գա՝ որպես Պատվիրատուի հավատարիմ խորհրդատու և միշտ աջակցի Պատվիրատուի և Շահառուի օրինական շահերի իրականացմանը և պաշտպանի դրանք:

2.5 Ենթակապալառուներ

Խորհրդատուն իրավունք ունի Ծառայությունների մատուցման համար որոշակի առաջադրանքների կատարման նպատակով իր հաշվին ներգրավելու երրորդ անձանց՝ պայմանով, որ Խորհրդատուն ամբողջությամբ պատասխանատու է բոլոր պատվիրակված աշխատանքների կատարման և ավարտի համար՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան: Խորհրդատուն գրավոր ծանուցում է Պատվիրատուին՝ ենթակապալառու ներգրավելու ցանկացած մտադրության մասին, այդ թվում՝ ենթակապալառուի (ենթակապալառուների) ինքնության և այդ ենթակապալառուին (ենթակապալառուներին) հանձնարարվելիք աշխատանքների շրջանակի մասին՝ նախքան ենթակապալի պայմանագիր կնքելը: Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ հաստատելու կամ պատճառաբանված ձևով մերժելու ենթակապալառուի (ենթակապալառուների) առաջարկվող թեկնածությունը՝ ենթակապալառու ներգրավելու ցանկացած մտադրության մասին ծանուցվելուց հետո յոթ օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդատուն պետք է ապահովի, որ բոլոր ենթակապալառուները պահպանեն սույն Պայմանագրի պայմանները, և պատասխանատվություն է կրում ենթակապալառուի (ենթակապալառուների) կողմից այդ պայմանների ցանկացած խախտման համար: Ենթակապալառուին (ենթակապալառուներին) որևէ աշխատանքի պատվիրակմամբ Խորհրդատուն չի ազատվում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորություններից և պատասխանատվությունից:

2.6 Համագործակցություն Նախագծողի հետ

Խորհրդատուն պարտավորվում է գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթի պատրաստման աշխատանքներում առաջնորդվել Նախագծողի մշակած՝ գլխավոր հատակագծի հայեցակարգով և զուգահեռաբար մշակման փուլում գտնվող՝ սխեմատիկ գլխավոր հատակագծով: Խորհրդատուն պարտավորվում է առնվազն երկու շաբաթը մեկ անգամ, իսկ ըստ Նախագծողի պահանջի՝ ավելի հաճախ, աշխատանքային հանդիպումներ ունենալ Նախագծողի հետ և գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթում արտացոլել Նախագծողի բոլոր պահանջները: Խորհրդատուն պարտավորվում է, ըստ Նախագծողի պահանջի, Նախագծողին տրամադրել ցանկացած նյութ, որն անհրաժեշտ է սխեմատիկ գլխավոր հատակագծի մշակման համար՝ Նախագծողի կողմից սահմանված ժամկետում:

2.7 Լրացուցիչ ծառայություններ

Սույն Պայմանագրում չներառված ցանկացած ծառայության վերաբերյալ պետք է գրավոր համաձայնություն ձեռք բերվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ պայմանով, որ այդ լրացուցիչ ծառայությունների արժեքը պետք է գրավոր համաձայնեցվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ նախքան ծառայությունների մատուցումը:

**3 Ծառայությունների համար փոխհատուցում և վճարում**

3.1 Որպես ամբողջական փոխհատուցում բոլոր Ծառայությունների՝ բավարար մակարդակով կատարման համար՝ Պատվիրատուն համաձայնում է Խորհրդատուին վճարել Ծառայությունների համար փոխհատուցում՝ հետևյալ կերպ (այսուհետ՝ «**Ծառայությունների Վճար**»):

**հիմնական ծառայություններ.** Ծրագրի համար գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթի պատրաստում՝ 275 000 000 (երկու հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն),

**լրացուցիչ (կամրնտիր) ծառայություն 1.** էլեկտրասնուցման արտաքին գծի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի մշակման աշխատանքներ՝ մինչև 294 000 000 (երկու հարյուր ինսուտնչորս միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն),

**լրացուցիչ (կամրնտիր) ծառայություն 2.** արտաքին զազամատակարարման ցանցի մշակման աշխատանքներ՝ մինչև 97 000 000 (ինսուտյոթ միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն),

**լրացուցիչ (կամրնտիր) ծառայություն 3.** խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի մշակման աշխատանքներ՝ մինչև 190 000 000 (հարյուր ինսուտն միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

3.2 Ծառայությունների Վճարը, համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալների և ներկայացվելիք նյութերի, պետք է ներառի Խորհրդատուի ընթացիկ ծախսերը, ճանապարհորդության ծախսերը, աշխատաժողովներին մասնակցությունը և Խորհրդատուի ցանկացած այլ ծախս, որը կատարվել է Ծառայությունների մատուցման կապակցությամբ բացառությամբ պետական և տեղական տուրքերի և այլ պարտադիր վճարների գումարների (առկայության դեպքում), որոնք վճարվում են Պատվիրատուի կողմից:

3.3 Սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալի, ներկայացվելիք նյութերի կամ ներկայացման ժամկետի հետ կապված ցանկացած ընդլայնում Խորհրդատուի կողմից պետք է իրականացվի խելամիտ վճարի դիմաց, որը փոխադարձաբար կհամաձայնեցվի Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից:

3.4 Ծառայությունների Վճարը պետք է վճարվի ՀՀ դրամով:

3.5 Պատվիրատուն և Խորհրդատուն համաձայնում են, որ Խորհրդատուն հիմնական ծառայությունների համար նախատեսված վճարումները՝ ըստ վճարման ժամանակացույցի, ստանալու է համապատասխան հաշվարկային փաստաթղթերը տրամադրելուց 30 օրացուցային օրվա ընթացքում: Բոլոր վճարումների դեպքում Պատվիրատուն պետք է գրավոր հաստատի, որ ո՛չ Պատվիրատուն, ո՛չ էլ Շահառուն Ծառայությունների այն մասի որակի կամ համապատասխանության առնչությամբ որևէ առարկություն չունեն, որի համար Խորհրդատուն նախատեսում է ներկայացնել հաշվարկային փաստաթուղթ, որպեսզի Խորհրդատուն կարողանա համապատասխան հաշվարկային փաստաթուղթը տրամադրել:

3.6 Եթե հաշվարկային փաստաթուղթը տրամադրելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Խորհրդատուի հաշվին վճարումը չի ստացվում, ապա Ծառայությունները կկասեցվեն մինչև վճարումը ստանալը:

3.7 Հիմնական ծառայությունների համար վճարման ժամանակացույցը սահմանվում է սույն Պայմանագրի Հավելված 2-ով (*Տեխնիկական Բնութագիր-Գնման Ժամանակացույց*) նախատեսված՝ «Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով:

3.8 Լրացուցիչ (կամրնտիր) ծառայությունների համար վճարման հստակ չափը, վճարման ժամանակացույցն ու պայմանները պետք է հաստատվեն յուրաքանչյուր լրացուցիչ

(կամընտիր) ծառայության մատուցման համար Կողմերի միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրով, որը կլինի սույն պայմանագրի անբաժանելի մասը:

#### **4 Կատարման Բանկային Երաշխիք**

4.1 Խորհրդատուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար և որպես Խորհրդատուի կողմից, սույն Պայմանագրի համաձայն, Պատվիրատուից որևէ վճարում ստանալու նախապայման՝ Խորհրդատուն պարտավոր է սույն Պայմանագրի կնքումից հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել ցպահանջ կատարման Բանկային Երաշխիք՝ հիմնական ծառայությունների վճարի տասը տոկոսին համարժեք գումարի չափով, որն ուժի մեջ կմտնի թողարկման օրվանից և ուժի մեջ կլինի աշխատանքների ավարտից հետո 30 օրացուցային օր (այսուհետ՝ «**Կատարման Բանկային Երաշխիք**»):

4.2 Կատարման Բանկային Երաշխիքը պետք է վերադարձվի Խորհրդատուին՝ Կատարման Բանկային Երաշխիքի պայմանների համաձայն, դրա գործողության ժամկետը լրանալուց և Կատարման Բանկային Երաշխիքով նախատեսված բոլոր պարտավորություններն ամբողջությամբ կատարվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

#### **5 Հետաձգում**

Պատվիրատուն կարող է, Խորհրդատուին գրավոր ծանուցում ներկայացնելով, ցանկացած պահի հետաձգել Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացումը: Ծրագրի ամբողջությամբ կամ մասնակիորեն հետաձգման դեպքում, հետաձգումից 30 օրացուցային օրվա ընթացքում, Խորհրդատուին փոխհատուցում կտրվի մինչև հետաձգման օրը կատարված բոլոր աշխատանքների համար: Եթե որևէ այդպիսի հետաձգման տևողություն գերազանցի վեց ամիսը, ապա Խորհրդատուն իրավունք կունենա դադարեցնելու սույն Պայմանագիրը:

#### **6 Պատվիրատուի պարտավորությունները**

6.1 Պատվիրատուն կամ Շահառուն Խորհրդատուին պետք է տրամադրի Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ գլխավոր հատակագծին, նախագծման նպատակներին, նախագծման սահմանափակումներին և չափանիշներին վերաբերող պահանջները:

6.2 Պատվիրատուն կամ Շահառուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշանակի ներկայացուցիչ, որը Ծրագրի շրջանակներում լիազորված է գործելու Պատվիրատուի և Շահառուի անունից: Այդպիսի լիազորված ներկայացուցիչը պետք է ուսումնասիրի Խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, և անհապաղ որոշումներ կայացնի դրանց վերաբերյալ՝ Ծառայությունների տրամադրման ընթացքի անհիմն ձգձգումներից խուսափելու համար:

6.3 Պատվիրատուն և Շահառուն պետք է տրամադրեն պահանջվող տեղեկատվությունը և տրամադրեն հաստատումներ և կայացնեն որոշումներ որքան հնարավոր է արագ, որպեսզի ապահովվի Ծառայությունների մատուցման կանոնավոր առաջընթացը:

#### **7 Պայմանագրի դադարեցում**

7.1 Պատվիրատուն ցանկացած պահի կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը՝ Խորհրդատուին ներկայացնելով գրավոր ծանուցում դադարեցման մասին:

7.2 Խորհրդատուն կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը, եթե Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում բազմիցս չեն կատարվել հաշվարկային փաստաթղթերով

նախատեսված վճարումներ՝ Պատվիրատուին և Շահառուին ներկայացնելով դադարեցման մասին գրավոր ծանուցում:

7.3 Պայմանագրի դադարեցման դեպքում, Խորհրդատուն պետք է դադարեցնի աշխատանքները, ըստ կիրառելիության, դադարեցման մասին գրավոր ծանուցումն ստանալուց կամ ուղարկելուց անմիջապես հետո, և մեկ ամսվա ընթացքում հաշվետվություն ներկայացնի աշխատանքների կարգավիճակի մասին: Այս հաշվետվությունը պետք է պարունակի մինչև դադարեցման ամսաթիվը կատարված աշխատանքների կարգավիճակի և ծավալի մասին տեղեկություն, ինչպես նաև նշում կատարված աշխատանքների համար վճարման ենթակա փոխհատուցման գումարի մասին:

7.4 Պայմանագրի դադարեցման դեպքում Խորհրդատուին պետք է փոխհատուցում տրվի մինչև Պայմանագրի դադարեցման ամսաթիվը մատուցված բոլոր ծառայությունների համար, և Պատվիրատուն ու Շահառուն պետք է պահպանեն Խորհրդատուի մտավոր սեփականության իրավունքը:

## **8 Սեփականության իրավունք/ Մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք**

8.1 Բացառությամբ Խորհրդատուի կողմից այլ նախագծերում օգտագործվող ստանդարտ բնութագրերի, դետալների և դիզայնի, բոլոր տեղեկությունները, տվյալները (dwg և pdf), գծագրերը, համակարգչային գրառումները, էլեկտրոնային տվյալները և Խորհրդատուի կողմից Շառայությունների կատարման ընթացքում մշակված կամ պատրաստված փաստաթղթերը Խորհրդատուի կողմից ամբողջական փոխհատուցում ստանալուց հետո պետք է անհապաղ համարվեն, ըստ կիրառելիության, Պատվիրատուի կամ Շահառուի բացարձակ սեփականությունը:

8.2 Ըստ կիրառելիության, Պատվիրատուի կամ Շահառուի բոլոր տեղեկությունները, տվյալները, գծագրերը և փաստաթղթերը, որոնց Խորհրդատուն կարող է տիրապետել կամ որոնց մասին Խորհրդատուն կարող է տեղեկանալ Շառայությունների մատուցման ընթացքում, շարունակում են լինել համապատասխանաբար Պատվիրատուի կամ Շահառուի բացարձակ սեփականությունը, և Խորհրդատուն իրավունք ունի օգտագործելու դրանք միայն Շառայությունների մատուցման համար:

8.3 Խորհրդատուն պահպանում է հեղինակային իրավունքի մասին օրենքով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

8.4 Պատվիրատուն և Շահառուն կարող են օգտագործել Խորհրդատուի ստեղծագործական սեփականությունն առանց նրա համաձայնության այն դեպքում, երբ դրա սեփականության իրավունքը փոխանցվել է Պատվիրատուին սույն Պայմանագրի համաձայն՝ նույնիսկ այն դեպքում, երբ ստեղծագործական սեփականությունը պաշտպանված է հեղինակային իրավունքի մասին օրենքով:

8.5 Խորհրդատուն չպետք է օգտագործի, բացահայտի կամ վերարտադրի Պատվիրատուին պատկանող մտավոր սեփականության որևէ օբյեկտ՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության: Սույն դրույթը գործում է սույն Պայմանագրի դադարեցումից կամ գործողության ժամկետի ավարտից հետո:

## **9 Գաղտնիություն**

9.1 Բոլոր այն տեղեկությունները (ներառյալ սույն Պայմանագրի դրույթները), որոնք տրամադրվել են Կողմերից մեկի կողմից մյուսներին (բացառությամբ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության) և որոնք տրամադրող Կողմը սահմանել կամ նշել է որպես

գաղտնի տեղեկատվություն կամ որոնք ողջամտորեն պետք է դիտարկվեն՝ որպես գաղտնի, պետք է համարվեն գաղտնի և չպետք է բացահայտվեն որևէ երրորդ կողմի առանց տրամադրող Կողմի նախնական գրավոր համաձայնության, որը չպետք է անհիմն կերպով չտրամադրվի:

9.2 Սույն Պայմանագրով նախատեսված՝ գաղտնիության պարտավորությունն ուժի մեջ է մնում և շարունակում է գործել՝ Պայմանագրի դադարեցումից կամ ժամկետի ավարտից հետո՝ հինգ տարի ժամկետով:

## **10 Պատասխանատվություն**

10.1 Խորհրդատուն պատասխանատվություն է կրում Պայմանագրի պահանջների պահպանմամբ Ծառայությունների մատուցման համար:

10.2 Սույն Պայմանագրի հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություններ մատուցելու յուրաքանչյուր դեպքում Խորհրդատուից Պատվիրատուի պահանջով գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 3.1 հոդվածում նախատեսված՝ հիմնական ծառայությունների գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունները սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

10.3 Պայմանագրով նախատեսված՝ Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Խորհրդատուից յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար Պատվիրատուի պահանջով գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայությունների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

10.4 Պայմանագրի 10.2 և 10.3 հոդվածներով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Խորհրդատուին վճարման ենթակա գումարներից:

10.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.7 հոդվածով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար Խորհրդատուի պահանջով հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

10.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ սույն Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## **11 Պայմանագրի ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է մինչև, Պատվիրատուի և Շահառուի՝ սույն Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան, սույն Պայմանագրով նախատեսված հիմնական ծառայությունների մատուցումը և մինչև լրացուցիչ (կամընտիր) ծառայությունների մատուցումը՝ դրանց մասով Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագիր կնքված լինելու դեպքում, և Պատվիրատուի

կողմից սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումների կատարումը՝ առանց սահմանափակելու Պայմանագրի 8.5 և 9.2 հոդվածները:

**12 Ֆորս մաժոր**

Որևէ Կողմ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար, բացառությամբ վճարման պարտավորությունների, եթե այդպիսի պարտավորությունների չկատարումը պայմանավորված է Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող անկանխատեսելի հանգամանքներով, այդ թվում, սակայն առանց սահմանափակման՝ պատերազմ, ապստամբություն, էմբարգոներ, սահաբեկչություն կամ սաբոտաժ, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, դժբախտ պատահար, գործադուլ, ճառագայթում, փոխադրում ապահովելու անկարողություն (այսուհետ՝ «**Ֆորս Մաժոր**»): Ֆորս Մաժորից տուժած Կողմը պետք է (i) գրավոր ծանուցի իր պարտավորությունների կասեցման մասին՝ որքան ողջամտորեն հնարավոր է շուտ՝ նշելով այդ կասեցման ամսաթիվն ու ծավալը և դրա պատճառները, (ii) գործադրի իր լավագույն ջանքերը Ֆորս Մաժորը նվազագույն ուշացումով կարգավորելու կամ վերացնելու համար, և (iii) վերսկսի իր պարտավորությունների կատարումը կարգավորումից կամ պատճառների վերացումից հետո որքան հնարավոր է շուտ:

**13 Կիրառելի օրենք**

Սույն Պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

**14 Վեճերի լուծում**

14.1 Սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ խնդրի, վեճի, հակասության կամ պահանջի դեպքում, այդ թվում՝ Պայմանագրի գոյության, վավերության, կատարման կամ դադարեցման հետ կապված որևէ խնդրի (այսուհետ՝ «**Վեճ**») դեպքում, որի մասին Կողմը գրավոր ծանուցել է մյուս Կողմերին, Կողմերի ղեկավար մարմինները պետք է հանդիպեն և գործադրեն լավագույն ջանքերը՝ Վեճը բարեխղճորեն լուծելու համար:

14.2 Սույն Պայմանագրի 17.1 հոդվածի համաձայն՝ գրավոր ծանուցում ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում Վեճը չլուծվելու դեպքում այն պետք է կարգավորվի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**15 Դրույթների մասնատելիություն**

Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի որևէ կետ կամ դրույթ կամ դրա որևէ մաս իրավասու դատարանի կողմից ճանաչվի անվավեր, անօրինական, կամ ոչ կիրառելի, սույն Պայմանագիրը կշարունակի գործել առանց նշված դրույթների:

**16 Ամբողջական պայմանագիր**

Սույն Պայմանագիրը, այդ թվում՝ դրա բոլոր Հավելվածները, ներառում է Կողմերի ամբողջական համաձայնությունն ու փոխըմբռնումը սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ և փոխարինում է սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի նախորդող կամ առկա բոլոր բանավոր կամ գրավոր համաձայնություններն ու ըմբռնումները:

**17 Փոփոխություններ**

Սույն Պայմանագրի դրույթներից կարելի է հրաժարվել, դրանք կարող են լրացվել կամ փոփոխվել միայն Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված գրավոր փաստաթղթի հիման վրա:



**18 Օրինակներ**

Սույն Պայմանագիրը կարող է կնքվել է մի քանի օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, բայց բոլորը միասին կազմում են նույն մեկ պայմանագիրը: Պայմանագիրը կնքվում է երեք բնօրինակով: Յուրաքանչյուր Կողմի տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ, ներքոստորագրյալները սույն Պայմանագրի սկզբնամասում նշված օրը կնքեցին սույն Պայմանագիրը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ**

Ստորագրություն

Անուն՝ Սարգիս Հարությունյան  
Պաշտոն՝ նախագահ




ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Ստորագրություն



Անուն՝ Բահակ Ներսիսյան  
Պաշտոն՝ տնօրեն



ՀԱՀԱՌՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Ստորագրություն



Անուն՝ Արմեն Սիմոնյան  
Պաշտոն՝ տնօրեն



**1.1. Հիմնական ծառայություններ. Ծրագրի համար գլխավոր հատակագծի հաստատման նպատակով անհրաժեշտ փաթեթի պատրաստում**

**«Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման նախագծի առաջադրանք**

Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
<p>«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ» քաղաքաշինական ծրագրի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակում</p>	<p>Նախագծի մշակման հիմնական նպատակն է Ակադեմիական քաղաքի՝ ՀՀ Երևան քաղաքի և ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում ընտրված տարածքի համար ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ Էնջինիերս (gmp International GmbH Architects and Engineers) ընկերության կողմից մշակված հայեցակարգային նախագծի հիման վրա կազմել «Ակադեմիական քաղաք» ծրագրի գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական մանրամասն գոտևորման նախագիծը՝ ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով ամրագրված բուհերի խոշորացման և գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորման գործընթացով պայմանավորված: Նախագծի մշակման շրջանակում Ակադեմիական քաղաքը պետք է դիտարկել ոչ միայն որպես ուսումնական ու գիտական տարածք, այլև մտավոր ու մշակութային ժամանցի համար նախատեսված միջավայր, որը պետք է գործի 24-ժամյա ռեժիմով: Նախատեսված բուհական 6 կլաստերների՝ Դասական, Բժշկական, Տեխնոլոգիական, Կրթական, Արվեստների և Մպայական, տեղաբաշխման էսքիզային նախագծի հենքի վրա գլխավոր հատակագծի շրջանակում պետք է իրականացվի Ակադեմիական քաղաքի համար տեղորոշված տարածքի սահմաններում դրանց տրանսպորտային, հետիոտնային, ինժեներական և սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների հասանելիության, հանրային տարածքների համակարգի կազմակերպման և տարբեր կլաստերների համար կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների, ինչպես նաև հնարավոր սոցիալական ազդեցության և տնտեսական գործոնների համապարփակ ուսումնասիրություն, գնահատում և մանրամասն չափորոշիչների սահմանում:</p> <p>Անհրաժեշտ է իրականացնել Ակադեմիական քաղաքի լանդշաֆտի կազմակերպման, Ակադեմիական քաղաքի համար անհրաժեշտ կոմունալ ենթակառուցվածքների պլանավորման, տրանսպորտային ցանցի նախագծի կազմման աշխատանքները:</p> <p>Առանձին բաժնով անհրաժեշտ է իրականացնել սպայական կլաստերի մանրամասն հատակագծի մշակումը՝ հաշվի առելով վերջինիս ներկայացվող առանձնահատուկ պահանջները, և համապատասխանացնելով այն մյուս կլաստերների հատակագծային մշակման մակարդակին:</p> <p>Մշակվող ծրագրային փաստաթղթի միջոցով անհրաժեշտ է ապահովել բարենպաստ կենսամիջավայրի ձևավորում, ուսումնակրթական ոլորտը սպասարկող նորաստեղծ քաղաքաշինական հանգույցի համաչափ և կայուն</p>

	<p>զարգացման համար անհրաժեշտ ուսումնական պրոցեսի և դրան առնչվող հարակից գործառույթների առավել արդյունավետ կազմակերպման նախադրյալների ստեղծում, բնական լանդշաֆտների արժեքավոր հատվածների, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ու լավագույնս օգտագործմանն ուղղված միջոցառումների մշակում, հատակագծային միջոցներով տարածքում բարենպաստ միկրոկլիմայի ձևավորում և լանդշաֆտների դեգրադացված հատվածների ռեկուլտիվացում ու վերաօգտագործում:</p> <p>Փաստաթղթերի մշակման հիմնական սկզբունքներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծում.</li> <li>• շրջակա միջավայրի վրա տնտեսական և այլ գործունեության անբարենպաստ ազդեցությունների նվազեցում, ներկա և ապագա սերունդների համար առողջ կենսամիջավայրի ապահովում՝ տարածքների և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման միջոցով.</li> <li>• կրթական գործընթացի կազմակերպման և հանգստի ու ժամանցի համար առողջ, անվտանգ և հարմարավետ միջավայրի և պայմանների ստեղծում.</li> <li>• կանաչ ճարտարապետության, տնտեսության և կանաչ լանդշաֆտի ձևավորման մեթոդաբանության կիրառում.</li> <li>• հատակագծային միավորի շրջանակում առաջարկվող լուծումներում էներգաարդյունավետության սկզբունքների լայնորեն կիրառում՝ կլիմայի փոփոխության մարտահրավերների ենթատեքստում,</li> <li>• տարածքի հատակագծային և ծավալատարածական զարգացում՝ ներդաշնակորեն ինտեգրելով բնական լանդշաֆտի առանձնահատկություններին .</li> <li>• ներդրումներ ներգրավելու, բնակչության զբաղվածության և մրցունակության աճի համար ժամանակակից կրթական կլաստերների պլանավորման, տրանսպորտի, ինժեներական և շրջակա միջավայրի պահպանության մոտեցումների համար լավագույն միջազգային փորձի և լուծումների օգտագործում.</li> <li>• պլանավորման գործընթացին հանրության ներգրավվածության և մասնակցության ապահովում:</li> </ul> <p>Գլխավոր հատակագծի մասով նախագիծը պետք է առաջարկի տարածքի հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• տարածքային զարգացման հիմնական առաջադրված ուղղություններին համապատասխանող, ներդրումների համար նպաստավոր գոտիների սահմանազատումը, դրանց միջև փոխադարձ գործառնական կապերի ապահովումը՝ հողերի նկատմամբ նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններով,</li> <li>• ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանն ուղղված հատակագծային կառուցվածքի ձևավորմանը,</li> <li>• ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացմանը՝ ապահովելով ինչպես հարմարավետ կապեր արտաքին հաղորդակցուղիների հետ, այնպես էլ</li> </ul>
--	---

	<p>ներքին շրջանառությունը՝ ներքին տարածքներն առավելագույնս գերծ պահելով տրանսպորտային և հետիոտն հոսքերի փոխհատումներից,</p> <ul style="list-style-type: none"> <li>• պատմամշակութային ժառանգության պահպանությանը,</li> <li>• տարածքի ինժեներական նախապատրաստմանը,</li> <li>• ստորգետնյա քաղաքաշինության ներդրմանը (ապահովելով տրանսպորտային միջոցների կանգառների, քաղաքացիական պաշտպանության անհրաժեշտ միջոցների տեղակայման հատվածներ՝ վերգետնյա տարածքները խնայելով կանաչ գոտիների ձևավորման համար,</li> <li>• այլընտրանքային (էլեկտրական) ներքին տրանսպորտի կիրառում կլաստերի ողջ տարածքում՝ որպես հաղորդակցության հիմնական միջոց,</li> <li>• բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը:</li> <li>• կառուցապատման հերթականությունը,</li> </ul> <p><b><i>Գոտնորման մասը ներկայացնում է Ակադեմիական քաղաք հայեցակարգային նախագծի տարածքի հողօգտագործման և քաղաքաշինական մանրամասն գոտնորումը, որը սահմանում է.</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• գլխավոր հատակագծի շրջանակում կառուցապատման ենթակա հողերի նկատմամբ կատարված հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին համապատասխան հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</li> <li>• հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը, հեռանկարային կառուցապատման չափորոշիչները,</li> <li>• հողօգտագործման ընդհանուր առաջարկվող ինտենսիվությունը/խտությունը,</li> <li>• հողամասերի վրա շենքերի տեղակայման պայմանները (տոկոսը)՝ սահմանելով առավելագույն բարձրությունը,</li> <li>• քաղաքաշինական կահավորման տարրերին (ուղեցույցերին, նշաններին, վահանակներին) ներկայացվող պահանջները,</li> <li>• տարածքում կիրառվող բուսատեսակների ընտրությունը:</li> </ul> <p>Ինժեներական մասը պարունակում է.</p> <p>ա) տարածքի ինժեներական ենթակառուցվածքի (այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների), կառուցվածքների և օբյեկտների հատակագիծը, հաշվարկային պահանջարկը.</p> <p>բ) հիմնական ճանապարհային ցանցը նախագծման տարածքում և դրա ազդեցության գոտում (անհրաժեշտության դեպքում)՝ փողոցների երկայնական ու լայնական կտրվածքների սահմանմամբ.</p> <p>գ) տարածքների բարեկարգման ուղղաձիգ հատակագծման գծագրի մշակումը.</p> <p>դ) շրջակա միջավայրի պահպանության գոտիները և միջոցառումները:</p> <p>Կանաչ ենթակառուցվածքների հայեցակարգի մշակման և դրա իրագործելիության գնահատման ծառայությունների շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝</p>
--	---

**1. Վերականգնվող էներգիայի հայեցակարգի մշակում**

Այս բաղադրիչի շրջանակում նախատեսվում է բացահայտել վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների ներուժը Ակադեմիական քաղաքի տարածքում՝ էլեկտրաէներգիայի ու բնական գազի սպառման ծավալները հնարավորինս նվազեցնելու նպատակով: Նախատեսվում է սահմանել Ակադեմիական քաղաքի ենթակառուցվածքին և կարիքին համապատասխան վերականգնվող էներգիայի հնարավոր տեխնոլոգիաները, գնահատել դրանց ներդրման համար իրատեսական ծախսերը, ինչպես նաև կանխատեսել ներդրման արդյունքում ակնկալվող եկամտաբերությունը:

Նախատեսվում է հայեցակարգը մշակել հետևյալ հիմնական փուլերով՝

1. Վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների տեղադրման թույլատրելի տարածքների բացահայտում և քարտեզագրում: Տեխնոլոգիաները, չսահմանափակվելով ներքոնշյալ ցանկով, կարող են ներառել՝
  - 1.1. *Գետնի վրա տեղադրված արևային ՖՎ համակարգեր.*
  - 1.2. *Լողացող արևային ՖՎ համակարգեր.*
  - 1.3. *Արևային կայանների կլաստերներ.*
  - 1.4. *Երկրաջերմային համակարգեր (հորիզոնական և ուղղահայաց).*
2. Էներգիայի արտադրողականության սիմուլյացիաներ. օգտագործելով PVsyst կամ PVGIS ծրագրակազմը
3. Տեխնիկատնտեսական իրագործելիության վերլուծություն, որը կներառի շինարարական նորմերի վրա հիմնված սեյսմիկության սահմանափակումները:
4. Ռիսկերի նույնականացում:
5. Ծրագրի իրագործման շրջանակում բնապահպանական նորմերի պահպանմանն ուղղված քայլերի, տեխնիկական մանրամասների և տնտեսական կենսունակության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

**2. Անձրևաջրերի և կեղտաջրերի կառավարման և ջրային ռեսուրսների վերօգտագործման ռազմավարության մշակում**

Այս բաղադրիչի շրջանակում նախատեսվում է մշակել ռազմավարություն, որի իրագործումը հնարավորություն կտա երաշխավորել ջրի արդյունավետ կերպով հավաքման, մշակման և վերօգտագործման գործընթացները՝ ջրի մասին ՀՀ օրենսդրության և կայունության միջազգային չափանիշներին համապատասխան: Ռազմավարությունը մշակելիս՝ առաջնահերթություն է տրվելու ապակենտրոնացված համակարգերին, փակ շրջանով վերօգտագործման և կլիմային հարմարվող դիզայնին:

Ռազմավարության մշակումը նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական փուլերով՝

1. Տեղանքի հիդրոլոգիական գնահատում՝ համապատասխանեցված ՀՀ ջրային օրենսգրքի և մակերևութային ջրերի կառավարման շրջանակներին:
2. Անձրևաջրերի հավաքման համակարգի ճարտարապետության մշակում
3. Կեղտաջրերի հեռացման համակարգերի նախագծում. ոռոգման, լվացման կամ հրդեհային համակարգերում կրկնակի օգտագործում պայմանով, որ շենքերի նախագծման ժամանակ նախատեսվում են երկակի խողովակաշարային համակարգեր:
4. Ջրային ավազանների կամ մոդուլային կենսառեակտորների միջոցով կեղտաջրերի մաքրման գործընթացի մշակում:

	<p>5. Ջրի որակի մոնիտորինգի համար սահմանաչափերի սահմանում՝ համաձայն ԱՀԿ ուղեցույցների և Հայաստանի Առողջապահության նախարարության շեմերի.</p> <p>6. Ինտեգրում LEED-ի (Water Efficiency, Wec1-3), BREEAM (Wat 01-04) և ISO 14046-ի (Water Footprint) հետ.</p> <p>7. Իրավական աջակցություն ՀՀ Կադաստրի կոմիտեի, Առողջապահության և Շրջակա միջավայրի նախարարությունների կողմից թույլտվությունների տրամադրման և հողօգտագործման պլանավորման համար:</p> <p><b>3. Ընդհանուր հայեցակարգ և նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում</b>  Աշխատանքների շրջանակում նախատեսվում է ձևավորել վերականգնվող էներգիայի, ջրային համակարգերի, ենթակառուցվածքների և բնապահպանական հայեցակարգի մշակման միասնական պլան՝ ապահովելով ներդրումների և իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական հիմքերը:</p> <p>Աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ քաղաքաշինական օրենսդրությանը և ՀՀ շինարարական ընդհանուր նորմերին համապատասխան տարածքի մասշտաբային հատակագծի մշակում:</li> <li>2. Երկրաջերմային ներուժի գնահատում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հաստատված երկրաբանական հետազոտության ստանդարտներով:</li> <li>3. Ցանցի միացման ուսումնասիրություն, ներառյալ՝</li> <li>4. ռազմավարական էկոլոգիական գնահատում (այսուհետ նաև՝ ՌԷԳ) Կանաչ սերտիֆիկացման գործողությունների պլանի մշակում</li> <li>5. Նախնական CAPEX/OPEX գնահատականներ, թույլտվության ժամկետներ և համապատասխանեցում ֆինանսավորող գործակալության ակնկալիքներին (օրինակ՝ ՎՁԵԲ, ԱՁԲ):</li> </ol>
<p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p>ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով ամրագրված բուհերի խոշորացման և գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորման գործընթացով պայմանավորված «Ակադեմիական քաղաք» ծրագիր:</p> <p>Նախագծի համար հիմք է հանդիսանում ՋիԷՄՓի ինթերնեյշնլ ՋիԷՄԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս (gmp International GmbH Architects and Engineers) ընկերության կողմից մշակված հայեցակարգային նախագիծը:</p> <p>Փաստաթուղթը մշակվում է ՀՀ գործող նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշում,</li> <li>2. ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր,</li> </ol>

	<ol style="list-style-type: none"> <li>3. &lt;&lt;Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին&gt;&gt; օրենքը (2014),</li> <li>4. ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 28-Ն հրաման,</li> <li>5. &lt;&lt;Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին&gt;&gt; ՀՀ օրենքը (1998),</li> <li>6. &lt;&lt;Բուսական աշխարհի մասին&gt;&gt; ՀՀ օրենքը (1999) և &lt;&lt;Կենդանական աշխարհի մասին&gt;&gt; ՀՀ օրենքը (2000),</li> <li>7. Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրք, 2010թ.</li> <li>8. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք, 2010թ.</li> <li>9. &lt;&lt;Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը&gt;&gt; (1999թ. լրամշակվել է 2007թ.),</li> <li>10. &lt;&lt;ՀՀ Հողային օրենսգիրքը&gt;&gt; (2001),</li> <li>11. &lt;&lt;ՀՀ Ընդերքի օրենսգիրքը&gt;&gt; (2012),</li> <li>12. &lt;&lt;ՀՀ Ջրային օրենսգիրքը&gt;&gt; (2002),</li> <li>13. ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02.05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»,</li> <li>14. Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշում,</li> <li>15. ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում»,</li> <li>16. ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,</li> <li>17. ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,</li> <li>18. «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում,</li> <li>19. «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին», ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշում,</li> <li>20. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին», ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշում</li> </ol>
<p>Ելակետային նյութեր Միջոցառումների ցանկը</p>	<p><b><u>Ելակետային նյութերի ձեռքբերում</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Պատվիրատուն տրամադրում է ծրագրի վերաբերյալ կատարված և հավաքագրված հնարավոր բոլոր տեղեկատվական ելակետային նյութերը,       <ul style="list-style-type: none"> <li>➤ կադաստրային քարտեզագրման նյութերը (թեմատիկ շերտերով), 2024 թվականի հողային հաշվետվությունը, տեղագրական հանույթը</li> <li>➤ ինժեներաերկրաբանական հետազննության նյութերը</li> <li>➤ տարածքի բնակլիմայական պայմանները, քամիների վարդը</li> <li>➤ ջրային, հումքային ռեսուրսները</li> <li>➤ ինժեներական առկա ենթակառուցվածքները</li> <li>➤ փողոցային ցանցի լայնական կտրվածքները, ինտենսիվությունը</li> <li>➤ շրջակա միջավայրի առկա վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը:</li> </ul> </li> </ul>

- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան բացակայող ելակետային նյութերի (կադաստրային քարտեզը՝ համապատասխան թեմատիկ շերտերով, հողօգտագործումները, հողատեսքերի սահմանները, ծածկագրերը, հողատեսքերն ըստ սեփականության ձևերի, փողոցային ցանցը, շենքերը շինություններն ըստ հարկայնության, ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերը, տեղագրական հանույթները, համայնքներին վերաբերող այլ տվյալներ) հավաքագրումը կատարում է Խորհրդատուն :

**Բազմագործոն վերլուծություն, համալիր գնահատում**

- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան ելակետային նյութերի տվյալների վերլուծություն,

- հենակետային հատակագծի մշակում՝ ռիսկերի և սահմանափակումների նշումով,

- շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերից բնակավայրի տարածքների խոցելիության և ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ինժեներատեխնիկական և կանխարգելիչ մեխանիզմների մշակում և վտանգավոր բնական և տեխնածին երևույթներից տեղանքի ինժեներական պաշտպանական գոտիների սահմանների առանձնացում,

***Ակադեմիական քաղաքի տարածքում նախատեսվող լճակի իրագործելիության հնարավորության ու նպատակահարմարության գնահատում***

Փուլ 1. Լճակի ջրային բալանսի նախնական հաշվարկներ.

- լճակի համար ջրամատակարարման հաշվարկներ (մաքրված կոյուղաջուր, անձրևաջուր և այլն) քաղաքի ամբողջական բնակեցումից հետո բնակչության առավելագույն (80 000 մարդ) և արձակուրդների ժամանակ նվազագույն (20 000 մարդ) թվաքանակների դեպքերում: Հաշվի առնել նաև անձրևաջրերի սեզոնայնությունը,
- լճակից դուրս եկող ջրաքանակների գնահատում տարբեր սեզոններին կանաչապատ տարածքների ոռոգում ապահովելու համար,
- լճակի մակերեսից գոլորշացող ջրի հաշվարկ,
- լճակը լցման հնարավոր աղբյուրները և առաջին լցման ժամանակահատվածը ըստ աղբյուրների քանակի,
- մշակումների արդյունքում առաջարկել լճակի նպատակահարմար հայելու մակերես և ծավալ:

Փուլ 2. Լճակի հայեցեկարգային (տեխնիկական) նախագիծ, ներառյալ.

- անհրաժեշտ տվյալների հավաքագրում (գեոդեզիական, երկրաբանական, ջրագոլորշիացման որոշման հետազոտություններ և այլն),
- ջրի պահպանման բարենպաստ ծավալի և հայելու մակերեսի հիմնավորում,
- շինարարության համար անհրաժեշտ նյութերի ընտրություն,
- լճակի կառուցման համար առաջարկվող միջոցառումները՝ հաշվի առնելով գտնվելու վայրը, ծավալը, նպատակը, հատակի վրա հիդրավլիկական ճնշման, քամու և սեյսմիկ ազդեցությունների գնահատումները,
- ջրի մակարդակի վերահսկման միջոցառումներ,
- ջրի որակի մոնիտորինգի պարբերականության սահմանում,
- ներդրումների և իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական հիմքերի նախնական գնահատում,

	<ul style="list-style-type: none"> <li>• լճակը կառուցելու մոտավոր նախահաշիվ՝ հաշվի առնելով բոլոր աշխատանքները:</li> </ul> <p><b><u>Փորձաքննությունների իրականացում</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախագծի ներկայացում քաղաքաշինական համալիր և ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձաքննության,</li> <li>• ռազմավարական էկոլոգիական գնահատման և քաղաքաշինական փորձաքննության գործընթացին և հանրային քննարկումներին նախագծողների և Պատվիրատուի մասնակցություն (պատասխանատու ստորաբաժանման),</li> <li>• նախագծային փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում և հանձնում Պատվիրատուին՝ համալիր փորձաքննական հանձնաժողովի կարծիքներին ներկայացնելու,</li> <li>• ղիտողությունների և առաջարկությունների հիման վրա նախագծի վերջնամշակում և հանձնում Պատվիրատուին:</li> </ul>
<p>Նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Նախագիծը մշակվում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կազմով և բովանդակությամբ,</li> <li>• առանձին ներկայացվում է հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների աղյուսակը,</li> <li>• տեքստային մասերը ներկայացվում են A4 ֆորմատով, Arial Unicode տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15,</li> <li>• նախագծերը համաձայնեցման են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Microsoft Office Word, գծագրերը՝ AutoCAD և PDF ծրագրերով,</li> <li>• միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագծերը կատարողի կողմից ներկայացվում են համայնքի ղեկավարին և համապատասխան մարզպետներին հաստատման՝ մեկական էլեկտրոնային և մեկական թղթային տարբերակներով,</li> <li>• հաստատված նախագիծը կատարողի կողմից հանձնվում է Պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով՝ 10-ական օրինակ, թղթային՝ 3 օրինակի հաշվարկով:</li> </ul>
<p>Մշակվող նախագծային փաթեթի կազմ</p>	<p style="text-align: center;">ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԲԱՂԿԱՑԱԾ ԿԼԻՆԵՆ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՈՒ ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ</p> <p><b>Գրաֆիկական մասի գծագրերը</b> ներկայացվում են համաձայն առաջադրանքի (Մ1:5000 և Մ1:10000): Առանձին դեպքերում մասշտաբը կարող է ճշտվել Պատվիրատուի առաջադրանքով:</p> <p>Գլխավոր հատակագծի համար որպես ելակետային հիմք օգտագործվում են կադաստրային և հողաշինարարական քարտեզները, տեղագրական հանույթները, ինժեներաերկրաբանական, քարտեզները:</p> <p><b>1) հենակետային հատակագիծ</b> (կամ տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ)՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով, որտեղ ցույց են տրվում՝</p> <p>ա. տարածքի հատակագծային կառուցվածքը (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման, արտադրական, գյուղատնտեսական, կոմունալ և այլ տարածքներն ըստ գործառնական նշանակության (հողատեսքերի),</p> <p>բ. տրանսպորտային (այդ թվում՝ արտաքին տրանսպորտի) կապերը և ճանապարհային ցանցը,</p>

- գ. ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների տարածքները,
- դ. ջրային օբյեկտների սահմանները,
- ե. բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանները,
- զ. բնակավայրի փաստացի սահմանագիծը.

**2) ռիսկերի և սահմանափակումների քարտեզ** (կամ տարածքի համալիր գնահատման քարտեզ)՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Ռիսկերի և սահմանափակումների քարտեզում ցույց են տրվում՝

ա. կառուցապատման համար անբարենպաստ տարածքները՝ դրանց բնութագրերի նշումով,

բ. իրավասու մարմինն հայտնի բնական ու տեխնածին վտանգավոր երևույթների պատճառով կառուցապատման և այլ նպատակներով հողօգտագործման համար անբարենպաստ տարածքները,

գ. երկրաբանական ֆոնդում պետական գրանցում ստացած հանքավայրերի սահմանագծերը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների սահմանները,

դ. շրջակա միջավայրն աղտոտող իրավասու մարմինն հայտնի օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիները,

ե. էկոլոգիական իրավիճակի նկարագիրը՝ աղմուկի, էլեկտրամագնիսական ճառագայթման, ռադիոակտիվ աղտոտվածության և այլ էկոլոգիական խախտումների իրավասու մարմինն հայտնի գոտիները,

զ. սույն ենթակետի «բ» և «դ» պարբերություններում նշված, ինչպես նաև սանիտարապաշտպանիչ գոտիներ ունեցող այլ օբյեկտները հարևան համայնքների կողմից տրամադրված նյութերի հիման վրա նշվում են նաև համայնքի վարչական սահմանից դուրս՝ հարևան համայնքների առավելագույնը 1000 մետր շառավղով տարածքներում՝ կախված տվյալ օբյեկտի սանիտարապաշտպանիչ գոտու նորմատիվային չափից.

**3) ճանապարհային ցանց և տրանսպորտի կազմակերպման**

**ուրվագիծ**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Տրանսպորտի գոյություն ունեցող և նախագծային գծային օբյեկտները գծագրի վրա նշվում են նույն գույնի՝ համապատասխանաբար հոծ և կետագիծ գծերով, իսկ կետային օբյեկտների տարածքները նույն գույնի թափանցիկ լիցքերով՝ նախագծայինի դեպքում ավելացնելով համապատասխան գույնի շեղագիծ: Տրանսպորտի կազմակերպման ուրվագծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում գոյություն ունեցող և նախագծային.

ա. արտաքին տրանսպորտի (երկաթուղային գծեր և կայարաններ, օդանավակայաններ, կամուրջներ, ուղեկամուրջներ, թունելներ, ճոպանուղիներ և այլն) տարածքներն ու կառույցները,

բ. ավտոմոբիլային ճանապարհների ցանցը և դրանց դասակարգումը,

գ. միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիները, ներհամայնքային ավտոմոբիլային ճանապարհների կարմիր գծերը,

**4) ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքի ուրվագիծ**՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Ինժեներական ենթակառուցվածքների գոյություն ունեցող և նախագծային գծային օբյեկտները գծագրի վրա նշվում են տարբեր գույներով՝ համապատասխանաբար հոծ և կետագիծ գծերով, իսկ կետային օբյեկտների տարածքները՝ նույն գույնի թափանցիկ լիցքերով՝ նախագծայինի դեպքում ավելացնելով համապատասխան գույնի շեղագիծ: Ինժեներական ու կոմունալ ենթակառուցվածքի ուրվագծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում գոյություն ունեցող և նախագծային՝

	<p>ա. ինժեներական և կոմունալ սարքավորումների հիմնական կառուցվածքները,</p> <p>բ. հիդրոտեխնիկական կառույցները,</p> <p>գ. առաջարկություններ աղբավայրերի, մաքրման կայանների վերաբերյալ.</p> <p><b>5) լանդշաֆտային կազմակերպման ուրվագիծ՝</b> 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Լանդշաֆտային կազմակերպման ուրվագծում միագույն գծային հենակետային հիմքի վրա ցույց են տրվում՝</p> <p>ա. համայնքի սահմաններում ընդգրկված անտառային, ջրային և այլ բնական օբյեկտների, ինչպես նաև բնակավայրի սահմաններում ներառված բնական համայնքների տարածքները.</p> <p><b>6) տարածքային զարգացման հատակագիծ (հիմնական գծագիր)՝</b> 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով: Տարածքային զարգացման հատակագծում, հենակետային հատակագծի և ռիսկերի ու սահմանափակումների քարտեզի հիման վրա ցույց են տրվում՝</p> <p>ա. համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,</p> <p>բ. հատակագծային և ծավալատարածական կառուցվածքի բարելավման և զարգացման վերաբերյալ առաջարկությունները,</p> <p>գ. ճանապարհափողոցային ցանցի զարգացման միջոցառումները,</p> <p>դ. ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի զարգացման վերաբերյալ առաջարկություններ, աղբահանության և այլ կենցաղ-սպասարկման միջոցառումները,</p> <p>ե. բնապահպանական միջոցառումները, սանիտարական գոտիները, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գրանցված հողամասերի սահմաններով.</p> <p><b>7) հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր՝</b> 1:10000 կամ 1:5000 մասշտաբներով, որտեղ նշվում են՝</p> <p>ա. նախագծային լուծումներից բխող հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները՝ ճանապարհների կամ շենքերի և շինությունների սահմանագծերով,</p> <p>բ. գլխավոր հատակագծի իրականացման հերթականությունը՝ ըստ առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի), երկարաժամկետ (10-15 տարի) փուլերի (գծագրի վրա հողամասերը նշվում են համապատասխանաբար «Ա», «Մ», «Ե» տառերով).</p> <p><b>8) համայնքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում՝</b> 1:50000 կամ 1:25000 մասշտաբներով: Համայնքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում գծագրում ցույց են տրվում համայնքի հիմնական գործառական, ինժեներական, տրանսպորտային և հատակագծային կապերը հարևան համայնքների և այլ կարևոր օբյեկտների հետ.</p> <p>1-7-րդ ենթակետերում նշված գծագրերից յուրաքանչյուրը, կախված հազեցվածության աստիճանից, իր հերթին կարող է բաժանվել համապատասխան թվով շերտերի (ըստ առանձին հատակագծային գործոնների հազեցվածության, ինչպես նաև տարածքային պլանավորման գործընթացում դրանց նշանակության).</p> <p>Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, գլխավոր հատակագծի կազմում կարող են մշակվել նաև այլ գծագրեր, որոնց կազմը, բովանդակությունը և մասշտաբը նշվում են նախագծման առաջադրանքում:</p> <p><b>Գլխավոր հատակագծի տեքստային</b> մասը ներկայացվում է հետևյալ կազմով՝</p> <p><b>1) բացատրագիր,</b> հետևյալ բաժիններով.</p>
--	--

	<p><b>ա. «Համայնքի մասին» բաժնում</b> համառոտ ներկայացվում են՝ համայնքի (բնակավայրի) պատմության, բնակչության, պատմամշակութային հուշարձանների, բնության հատուկ պահպանվող տարածքների, հիմնական տրանսպորտային կապերի, հարևան համայնքների վերաբերյալ տեղեկությունները.</p> <p><b>բ. «Տարածքի փաստացի իրավիճակ» բաժնում</b> ներկայացվում է տարածքի բնակլիմայական և աշխարհագրական պայմանների, կառուցապատված հատվածի հատակագծային կառուցվածքի, հիմնական կառույցների, բնակելի ֆոնդի, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքի, կանաչ տարածքների, բնակավայրի այլ տարրերի համառոտ նկարագրությունը, բնակչության դեմոգրաֆիական տվյալները, բնական և արտադրական ռեսուրսները, առկա հողային ֆոնդը և դրա փաստացի օգտագործումը, համայնքի տարածական զարգացման խնդիրները, զարգացման հնարավորությունները և նպատակները</p> <p><b>գ. «Տարածքի համալիր գնահատական» բաժնում</b> նկարագրվում են բնական և տեխնածին վտանգները, ռիսկերը, քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, առողջապահական և այլ սահմանափակումները: Ներկայացվում է կառուցապատման և այլ նպատակներով առանձնացված տարածքների նկարագրությունը, դրանց ընտրության հիմնավորումները, հողամասերի հատկությունները, ցուցանիշները և այլն</p> <p><b>դ. «Համայնքի քաղաքաշինական զարգացում» բաժնում</b> ներկայացվում են նախագծային լուծումների նկարագրությունը, նախագծման ընթացքում դիտարկված տարբերակների վերլուծությունը և վերջնական ընտրության հիմնավորումը: Ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքի բարելավման, զարգացման և ստեղծման միջոցառումները, դրանց համար նախատեսված հողամասերը: Նախագծով նախատեսված այլ միջոցառումների նկարագրությունը և հիմնավորումները:</p> <ol style="list-style-type: none"> <li>2) շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ</li> <li>3) քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ</li> <li>4) պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ</li> <li>5) բնական լանդշաֆտների և կանաչապատ տարածքների պահպանման և զարգացման միջոցառումներ</li> </ol> <p><b>Քաղաքաշինական գոտևորման նախագիծ՝</b> Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման Հավելված N 2 որոշման պահանջներին համապատասխան.</p> <p><i>Գլխավոր հատակագծի մշակման բոլոր փուլերում նախատեսվում է նախագծային աշխատանքների քննարկում:</i></p> <p><b>Քննարկումների իրականացում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական և ՌԷԳ փորձաքննության շրջանակներում իրականացվող հանրային լսումների իրականացում՝ մասնագիտական հանրության ներգրավմամբ:</li> </ul>
--	---

<p>Մշակված ծրագրային փաստաթղթերի փորձաքննությունները<sup>1</sup></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Փաստաթղթերը կատարող կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձաքննության գործընթացը մեկնարկելու համար:</li> <li>• Փաստաթղթերը նախագծային կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում են քաղաքաշինական համալիր փորձաքննության եզրակացության:</li> <li>• Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կազմակերպությունը:</li> <li>• Կատարողը մասնակցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանրային քննարկումներին և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին:</li> </ul>
<p>Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը</p>	<p>Վերը նշված փորձաքննությունների գործընթացը հաջողությամբ ավարտելուց հետո դրական եզրակացություններ ստացած նախագիծը ներկայացվում է համապատասխան համայնքի ղեկավարին՝ ՀՀ վարչապետի 2024 թ. Նոյեմբերի 1-ի N 978-Լ որոշմամբ հաստատված կարգի Հավելված 2-ով սահմանված համալիր փորձաքննական հանձնաժողովին կարծիքների ուղարկելու:</p> <p>Հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում է համապատասխան մարմինների հաստատմանը:</p>

<sup>1</sup> Ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձաքննության ժամկետը և միջգերատեսչական հանձնաժողովի շրջանառության համար նախատեսված ողջամիտ ժամկետները ներառված են նախագծի մշակման ժամանակացույցով հիմնական աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետում: Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում գերատեսչությունների՝ ողջամիտ ժամկետներից ուշացումների համար:

**1.2. Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն 1. Էլեկտրասնուցման արտաքին գծի, 220/110/10կՎ հզորության ենթակայանի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի մշակման առաջադրանք**

Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ»-ի սնուցող 220կՎ բարձր լարման օդային գծի (ԲԼՕԳ) կառուցման առաջադրանք	Ելակետային տվյալների հավաքագրում, ինժեներաերկրաբանական հետազոտություն և գեոդեզիական հանույթ, մեկ երկշրթա և երկու մեկշրթանի գծերի կառուցում մետաղական ցինկապատ խարսխային-անկյունային և միջանկյալ հենարաններով՝ մեկուսիչները ապակյա, սնկաձև ե/բետոնե հիմքերով, միացում գոյություն ունեցող բարձրավոլտ ենթակայանին, ՇՄԱՌԳ: Երկարությունը համաձայն տեխնիկական պայմանի
Նոր 220կՎ բաց բաշխիչ սարքավորման (ԲԲՍ), 220/110/10կՎ հզորության էլ. ենթակայանի կառուցման առաջադրանք	Ինժեներաերկրաբանական հետազոտություն և գեոդեզիական հանույթ, ճարտարապետա-հատակագծային և կոնստրուկտիվ լուծումները, էլեկտրատեխնիկական լուծումներ, ցանցին միացման սխեմա, հոսանքի կարճ միացման հաշվարկ, տեխնոլոգիական պրոցեսի ավտոմատացված կառավարման, էլեկտրաէներգիայի ավտոմատացված ինֆորմացիոն-չափողական, կապի, դիսպետչերական և տեխնոլոգիական կառավարման համակարգեր, օպերատիվ կառավարման հանգույց համատեղված փակ բաշխիչ սարքավորման (ՓԲՍ) 35/10 կՎ շենքում, բաշխիչ սարքավորում (ԲՍ) և ենթակայանի կոնստրուկտիվ իրականացում (բաց, փակ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան (ԿԿԻ), Էլգազային լրակազմ բաշխիչ սարքավորում (ԿԲԿԵ), երկու տրանսֆորմատորներով, նումինալ լարումը (Բարձր կողմ/Միջին կողմ/Ցածր կողմ) 220/38,5/11 կՎ, օպերտիվ հաստատուն հոսանքի համակարգ (ՕՀՀՀ/ՕՈՒՒ), ուժակուտակիչ մարտկոցների լիցքավորման և վերալիցքավորման սարքեր, ռելեյական պաշտպանություն և ավտոմատիկա, ավտոմատ կրկնակի միացում, պահուստի ինքնավար միացում, հակավթարային ավտոմատիկա, Տեխնոլոգիական պրոցեսի ավտոմատացված կառավարման, էլեկտրաէներգիայի ավտոմատացված ինֆորմացիոն-չափողական, կապի, դիսպետչերական և տեխնոլոգիական կառավարման համակարգեր, հակահրդեհային համակարգեր
Գոյություն ունեցող 220, 110 և 35կՎ 6 ԲԼՕԳ-երի վերակառուցման և տեղափոխման առաջադրանք	Ելակետային տվյալների հավաքագրում, ինժեներաերկրաբանական հետազոտություն և գեոդեզիական հանույթ, մեկ երկշրթա և երկու մեկշրթանի գծերի կառուցում մետաղական ցինկապատ խարսխային-անկյունային և միջանկյալ հենարաններով՝ մեկուսիչները ապակյա, սնկաձև ե/բետոնե հիմքերով, միացում գոյություն ունեցող գծին: Երկարությունը համաձայն տեխնիկական պայմանի

**1.3. Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն 2. արտաքին գազամատակարարման ցանցի մշակման աշխատանքների առաջադրանք**

Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
<p>Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծ</p> <p>Գազամատակարարման արտաքին համակարգ</p>	<p>Մշակել Ակադեմիական քաղաքի Արտաքին գազամատակարարման համակարգի նախագծա նախահաշվային փաստաթղթերը, որն իրականացնելուց ապահովելու է՝ 800000 քմ ուսումնական շինությունների, 9000 քմ աղմինիստրատիվ շինությունների, 270000 քմ բնակելի տարածքների (հանրակացարան, բնակարաններ, հյուրանոց), 18500 քմ գործարանային տիպի տարածքների, թվով 4 հատ Լոդավազանների՝ յուրաքանչյուրը 1800 մ3 տարողունակությամբ, 35000 հանդիսատեսի համար Ազգային ստադիոնի, 2000 հանդիսատեսի համար համերգասրահի, առավելագույնը՝ 62000 ուսանողների և առավելագույնը՝ 18000 պրոֆեսորադասախոսական կազմի՝ որոնց 60% բնակվելու է մշտապես (ներառյալ ընտանիքները), ջեռուցման, տաք ջրամատակարարման և այլ կարիքների համար հուսալի, անխափան և անվտանգ գազամատակարարում:</p> <p>Համաձայն տեխնիկական պայմանների և Պատվիրատուի կողմից տրամադրված ելակետային տվյալների իրականացնել Ակադեմիական քաղաքի արտաքին գազամատակարարման համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:</p> <p>Նախագծման աշխատանքներն իրականացնել ՀՀ իրավական ակտերով սահմանված նորմերի դրույթների պահանջներին համապատասխան:</p> <p>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի N95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով, ապահովելով «Գազափոխադրման համակարգում անվտանգության և շահագործման կանոնների» պահանջները:</p> <p>Գազատարի պահպանման գոտիները հաշվարկել համաձայն ՀՀ Կառավարության 16 հուլիսի 2015թ-ի թիվ 787-Ն, իսկ նվազագույն հեռավորությունները՝ ՀՀ Կառավարության 21 ապրիլի 2023թ.-ի N584 որոշումների:</p>

**1.4. Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն 3. Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի մշակման աշխատանքների առաջադրանք**

Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
<p>Ակադեմիական քաղաք Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին համակարգերի նախագծերի մշակում</p>	<p>Ակադեմիական քաղաքի խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին համակարգերի նախագծերի մշակում և ներդրումային գնահատում</p> <p>Նախագծի հիմնական նպատակն է Ակադեմիական քաղաքը ապահովել խմելու-կենցաղային և հակահրդեհային կարիքների համար սպառվող անհրաժեշտ ջրաքանակով, հեռացնել քաղաքի կենցաղային և մթնոլորտային տեղումներից առաջացող ջրերը, ինչպես նաև ապահովել կանաչ տարածքների ոռոգման համար անհրաժեշտ ջրաքանակով: Արտաքին համակարգերի նախագծման հիմք պետք է հանդիսանան Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական պայմանները, որոնք կտրվեն ինժեներական համակարգերը սպասարկող ընկերությունների կողմից: Տեխնիկական պայմանների բացակայության և դրանց անհնարինության դեպքում կձեռնարկվեն այլ միջոցառումներ:</p>
<p>Նախագծի հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p>	<p>ՀՀ ջրային օրենսգիրք. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր ՀՀՇՆ 20.04.2020 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր», ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՀՀՇՆ 40-01.03- Կոյուղի. արտաքին ցանցեր եվ կառուցվածքներ ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 22-01-2023- «Շինարարական կլիմայաբանություն», Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները: Որակի հսկողություն» սանիտարական նորմեր և կանոններ» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին N 378-Ն որոշում</p>

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց

Հավելված 2.1

«Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքների կատարման

Աշխատանք						
Աշխատանքի անվանումը	Ծածկագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը	Կատարման	
					հասցեն	ժամկետը
1		Հազ. ՀՀ դրամ	275 000,0	1	Երևան Աջափնյակ, Արագածոտն (Մասունիկ)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 335 օր
Տեխնիկական բնութագիրը						
Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ նկարագիրը					
«Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակում	<p>Ակադեմիական քաղաքի տարածքը ներառող հատվածի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքներ էսքիզային նախագծի հենքի վրա գլխավոր հատակագծի շրջանակում պետք է իրականացվի.</p> <ul style="list-style-type: none"> <li>Ակադեմիական քաղաքի համար տեղորոշված տարածքի սահմաններում քաղաքի առանձին հատակագծային գոտիների տեղադիրքին ներկայացվող պահանջների, տրանսպորտային, հետիոտնային, ինժեներական և սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների հասանելիության համապարփակ ուսումնասիրություն, գնահատում և մանրամասն չափորոշիչների սահմանում՝ փողոցային ցանցի արդյունավետ լուծումների ներդրմամբ (որպես առաջնահերթ միջոցառում՝ դրանց իրականացման համար համապատասխան մանրամասնության նախագծային փաթեթի պատրաստմամբ),</li> <li>հանրային տարածքների՝ որպես էկոլոգիական միջանցքների, տարծքում միկրոկլիմայական բարենպաստ ֆոնի ապահովման գործոնի և սոցիալական շփումների համակարգի կազմակերպման և տարբեր կլաստերների համար կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրություն, գնահատում և սահմանում,</li> <li>հնարավոր սոցիալական ազդեցության և տնտեսական գործոնների համապարփակ ուսումնասիրություն, գնահատում և մանրամասն չափորոշիչների սահմանում,</li> <li>Ակադեմիական քաղաքի լանդշաֆտի կազմակերպման ուրվագծի մշակում՝ հաշվի առնելով ընտրված տարածքի լանդշաֆտային առանձնահատկությունները, ընդգծելով և պահպանելով դրանց առավել արժեքավոր հատվածները, և բացահայտելով հետընթաց ապրող հատվածները՝ բացահայտելով դրանց նկատմամբ ռեկուլտիվացման և</li> </ul>					

	<p>կենսագործունեության միջավայրի մաս վերաօգտագործման հնարավորությունները:</p> <p>Առանձին բաժնով անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել հայեցակարգով ձևավորված հորինվածքի առանցքային բաղադրիչներից մեկը հանդիսացող զգալի ջրային մակերեսի իրագործելիությանը՝ հաշվի առնելով փոստրակի զգալի խորությունն ու դրանով պայմանավորված ջրային նշանակալի ծավալը, որի աղբյուրը սակայն առկա չէ հայեցակարգի փուլում ձեռք բերված էլակետային տվյալների շրջանակում: Այնուհանդերձ, կարևորելով տվյալ բաղադրիչի նշանակությունը ինչպես հորինվածքի, այնպես էլ միկրոկլիմայի ու երիտասարդության կողմից ռեկրեացիոն տարբեր գործառնությունների կազմակերպման տեսանկյունից, նախատեսվում է իրականացնել Ակադեմիանական քաղաքի տարածքում նախատեսվող լճակի իրագործելիության ու նպատակահարմարության գնահատման աշխատանքներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ Փուլ 1. Լճակի ջրային բալանսի նախնական հաշվարկներ.</li> <li>✓ Փուլ 2. Լճակի հայեցակարգային (տեխնիկական) նախագիծ: Ուսումնասիրության արդյունքներով բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կորոշվի լճակի ներառման նպատակահարմարությունը գլխավոր հատակագծի կազմի մեջ:</li> </ul> <p>Առանձին բաժնով անհրաժեշտ է իրականացնել նաև.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մպայական կլաստերի մանրամասն հատակագծի մշակումը՝ հաշվի առելով վերջինիս ներկայացվող առանձնահատուկ պահանջները և համապատասխանացնելով այն մյուս կլաստերների հատակագծային մշակման մակարդակին՝ մանրամասն քաղաքաշինական գոտևորմանը և փողոցային ցանցի ու կոմունալ ենթակառուցվածքների համակարգի մանրամասն նախագծմանը կից ծավալատարածական էսքիզի միջոցով պատեկարացում տալով ձևավորվող քաղաքաշինական միջավայրի մասշտաբի, հարկայնության, զանգվածայնության, ուրվագծի, համայնապատկերների և այլնի վերաբերյալ:</li> </ul> <p><b><u>Գլխավոր հատակագծի մասով</u></b> նախագիծը պետք է առաջարկի տարածքի հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը՝ առանձնացնելով համապատասխան գոտիներ,</li> <li>• ուսումնակրթական ոլորտի հիմնական ճյուղերի համար նախատեսված գոտիների զարգացմանը,</li> <li>• տարածքային և ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը,</li> <li>• շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,</li> <li>• ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացմանը՝ ապահովելով ինչպես հարմարավետ կապեր արտաքին հաղորդակցուղիների հետ, այնպես էլ ներքին անարգել և արդյունավետ շրջանառությունը, ներքին տարածքներն առավելագույնս զերծ պահելով տրանսպորտային և հետիոտն հոսքերի փոխհատումներից,</li> <li>• պատմամշակութային ժառանգության պահպանությանը,</li> <li>• տարածքի ինժեներական նախապատրաստմանը,</li> <li>• ստորգետնյա քաղաքաշինության ներդրման միջոցներով ապահովել տարածքի կարիքները տրանսպորտային միջոցների կանգառների,</li> </ul>
--	--

	<p>քաղաքացիական պաշտպանության անհրաժեշտ միջոցների ապահովման նպատակով՝ վերգետնյա հատվածները խնայելով կանաչ գոտիների ձևավորման համար,</p> <ul style="list-style-type: none"> <li>• այլընտրանքային ներքին տրանսպորտի (էլեկտրոմոխիլներ, հեծանիվներ, ինքնագլորներ և այլն) կիրառում կլաստերի ողջ տարածքում՝ որպես հաղորդակցության հիմնական միջոց,</li> <li>• բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը:</li> <li>• կառուցապատման հերթականությունը,</li> </ul> <p><b>Գոտևորման մասը ներկայացնում է հողօգտագործման և քաղաքաշինական մանրամասն գոտևորումը, այն է.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• գլխավոր հատակագծում առանձնացված ընդհանուր գործառական գոտիների շրջանակում կառուցապատման ենթակա հողերի նկատմամբ կատարված նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին համապատասխան դրանց օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները,</li> <li>• հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը,</li> <li>• առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները,</li> <li>• հողօգտագործման ընդհանուր առաջարկվող ինտենսիվությունը/խտությունը,</li> <li>• տարածքային օգտագործման և կառուցապատման/զարգացման կանոնակարգը,</li> <li>• հողամասերի վրա շենքերի տեղակայման պայմանները (տոկոսը)՝ սահմանելով առավելագույն բարձրությունը,</li> <li>• քաղաքաշինական կահավորման տարրերին ներկայացվող պահանջները,</li> <li>• տարածքում օգտագործվող ուղեցույցերին, նշաններին, վահանակներին ներկայացվող պահանջները:</li> <li>• տարածքում կիրառվող բուսատեսակների ընտրությունը:</li> </ul> <p>Ինժեներական հաղորդակցողիների մասը պարունակում է.</p> <p>ա) տարածքի ինժեներական ենթակառուցվածքի (այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների), կառուցվածքների և օբյեկտների հատակագիծը, հաշվարկային պահանջարկը.</p> <p>բ) նախագծման տարածքում անարգել շրջանառություն ապահովող հիմնական ճանապարհային ցանցը և դրա ազդեցության գոտում (անհրաժեշտության դեպքում)՝ փողոցների երկայնական ու լայնական կտրվածքների, ճանապարհաճածկի շերտերի սահմանմամբ.</p> <p>գ) տարածքների բարեկարգման ուղղաձիգ հատակագծման գծաքի մշակումը.</p> <p>դ) շրջակա միջավայրի պահպանության գոտիները և միջոցառումները:</p> <p>Կանաչ ենթակառուցվածքների հայեցակարգի հայեցակարգի մշակման և դրա իրագործելիության գնահատման ծառայությունների շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝</p> <p>Վերականգնվող էներգիայի հայեցակարգի մշակում</p> <p>Այս բաղադրիչի շրջանակում նախատեսվում է բացահայտել վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների ներուժը Ակադեմիական քաղաքի տարածքում էլեկտրաէներգիայի ու բնական գազի սպառման ծավալները հնարավորինս նվազեցնելու նպատակով: Նախատեսվում է սահմանել Ակադեմիական</p>
--	---

	<p>քաղաքի ենթակառուցվածքին և կարիքին համապատասխան վերականգնվող էներգիայի հնարավոր տեխնոլոգիաները, գնահատել դրանց ներդրման համար իրատեսական ծախսերն, ինչպես նաև կանխատեսել ներդրման արդյունքում ակնկալվող եկամտաբերությունը:</p> <p>Անձրևաջրերի և կեղտաջրերի կառավարման և ջրային ռեսուրսների վերօգտագործման ռազմավարության մշակում</p> <p>Այս բաղադրիչի շրջանակում նախատեսվում է մշակել ռազմավարություն, որի իրագործումը հնարավորություն կտա երաշխավորել ջրի արդյունավետ կերպով հավաքման, մշակման և վերօգտագործման գործընթացները՝ ջրի մասին ՀՀ օրենսդրության և կայունության միջազգային չափանիշներին համապատասխան: Ռազմավարությունը մշակելիս՝ առաջնահերթություն է տրվելու ապակենտրոնացված համակարգերին, փակ շրջանով վերօգտագործման և կլիմային հարմարվող դիզայնին:</p> <p>Ընդհանուր հայեցակարգ և նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում</p> <p>Աշխատանքների շրջանակում նախատեսվում է ձևավորել վերականգնվող էներգիայի, ջրային համակարգերի, ենթակառուցվածքների և բնապահպանական հայեցակարգի մշակման միասնական պլան՝ ապահովելով ներդրումների և իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական հիմքերը:</p>
--	--

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

**«Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման աշխատանքների կատարման**

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքի կատարման ժամկետը	Աշխատանքի ծավալ/Վճարման ենթակա գումարը /հազար ՀՀ դրամ/
1	2	3	4
1	<p><b><u>I ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ելակետային նյութերի ձեռքբերում</li> <li>• Հենակետային հատակագծի կազմում</li> <li>• Բազմագործոն վերլուծություն և համալիր գնահատում</li> <li>• Լճակի իրագործելիության հնարավորության ու նպատակահարմարության գնահատում. Փուլ 1</li> </ul>	<p><b>Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում</b></p>	45 000,0
2	<p><b><u>II ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Սպայական կլաստերի մանրամասն հայեցակարգային հատակագծի մշակում</li> <li>• Լճակի իրագործելիության հնարավորության ու նպատակահարմարության գնահատում. Փուլ 2</li> </ul>	<p><b>Նախորդ փուլի ավարտից 75 օրացուցային օր հետո</b></p>	55 000,0
3	<p><b><u>III ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտ</li> <li>• Հանրության իրազեկման սահմանված ընթացակարգերին մասնակցություն</li> <li>• Գլխավոր հատակագծի տեքստային մասի կազմում</li> <li>• Ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձաքննություն</li> <li>• Գլխավոր հատակագծի նախագծի ներկայացում լիազոր մարմին՝ համալիր փորձաքննության</li> </ul>	<p><b>Նախորդ փուլի ավարտից 105 օրացուցային օր հետո</b></p>	85 000,0

4	<u>IV ՓՈԻԼ</u> <ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքաշինական գոտևորման նախագիծ</li> <li>• Գոտևորման նախագծի գրաֆիկական մաս</li> <li>• Գոտևորման նախագծերի տեքստային մաս</li> </ul>	Նախորդ փուլի ավարտից 90 օրացուցային օր հետո	75 000,0
5	<u>V ՓՈԻԼ</u> <ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքաշինական գոտևորման նախագծի ներկայացում լիազոր մարմին՝ համալիր փորձաքննության</li> <li>• Պայմանագրով սահմանված քանակությամբ օրինակների տպագրություն և հանձնում Պատվիրատուին</li> </ul>	Նախորդ փուլի ավարտից 15–30 օրացուցային օր հետո	15 000,0

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Լրացուցիչ կամընտիր ծառայություն 1. Էլեկտրասնուցման արտաքին գծի, 220/110/10կՎ հզորության ենթակայանի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի մշակման աշխատանքների կատարման

Աշխատանք						
Աշխատանքի անվանումը	Ծածկագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը	Կատարման	
					հասցեն	Ժամկետը
1		Հազ. ՀՀ դրամ	Մինչև 294 000,0	1	Երևան Աջափնյակ, Արագածոտն (Մասունիկ)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 335 օր
Տեխնիկական բնութագիրը						
Օբյեկտի անվանումը		Կատարման ենթակա աշխատանքների համառոտ նկարագիրը				
Էլեկտրասնուցման արտաքին գծի, 220/110/10կՎ հզորության ենթակայանի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի էլակետային տվյալների հավաքագրում և մշակում		<p>Էլակետային տվյալների հավաքագրում: Գոյություն ունեցող ԲԼՕԳ-ի ուսումնասիրություն, ենթակայանի տեղադիրքի ընտրություն, էլեկտրամատակարարումն իրականացնող կազմակերպության կողմից տրամադրվելիք տեխնիկական պայմաններ:</p> <p>Իրականացվելու է ենթակայանի հնարավոր տարածքի և ԲԼՕԳ-ի անցկացման հետագծի ուսումնասիրություն, որը թույլ է տալու բարձրավոլտ գծերի անցկացումը առանց խախտելու անվտանգության կանոններն ու նորմատիվային պահանջները: Ուսումնասիրվելու են բոլոր խոչընդոտները, տրվելու են հանգույցային լուծումների սխեմաներ:</p> <p>Գեոդեզիական հանույթ: Հանույթն իրականացվելու է նախնական ընտրված ուղեգծի ամբողջ երկայնքով և ենթակայանի տարածքում:</p> <p>Ինժեներաերկրաբանական հետազոտություն: Հետազոտությունը իրականացվելու է ենթակայանի տարածքում և նոր կառուցվող բոլոր հենարանների տակ:</p>				
Տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի աշխատանքային նախագիծ		<p>Տարածքով անցնող 6 ԲԼՕԳ-երի աշխատանքային նախագիծ: Մշակվում է մեկ երկշրթա և երկու մեկշրթանի գծերի տեղափոխման համար նախատեսվող մետաղական ցինկապատ խարսխային-անկյունային և միջանկյալ հենարաններ՝ մեկուսիչները ապակյա, սնկաձև ե/բետոնե հիմքերեր, ԲԼՕԳ-ի կառուցում, միացում գոյություն ունեցող գծերին:</p> <p>Համաձայնեցում: ԲԼՕԳ-երի աշխատանքային նախագիծը համաձայնեցվում է Պատվիրատուի և շահագրգիռ կողմերի հետ:</p>				
Էլեկտրասնուցման արտաքին գծի աշխատանքային նախագծի		<p>Արտաքին սնուցման ԲԼՕԳ-ի աշխատանքային նախագիծ: Մշակվում է եկ երկշրթա և երկու մեկշրթանի գծերի տեղափոխման համար նախատեսվող մետաղական ցինկապատ խարսխային-անկյունային և միջանկյալ</p>				

<p><b>և 220/110/10կՎ հզորության ենթակայանի Նախագիծ փուլի մշակում</b></p>	<p>հենարաններ՝ մեկուսիչները ապակյա, սնկաձև ե/բետոնե հիմքերեր, ԲԼՕԳ-ի կառուցում, միացում տեխնիկական պայմանով տրված բարձրավոլտ ենթակայանին կամ ԲԼՕԳ-ին:</p> <p>220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի նախագիծ փուլ: Մշակվում է Բաց Բաշխիչ Համասարքը (ԲԲՄ) (ՕԲՄ), փակ Բաշխիչ Համասարքը (ՓԲՄ) (ՅԲՄ), ճարտարապետա-հատակագծային և կոնստրուկտիվ լուծումները, էլեկտրատեխնիկական լուծումներ, ցանցին միացման սխեման, հոսանքի կարճ միացման հաշվարկը, բաց և փակ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանը (ԿԿՄ), ռելեյական պաշտպանությունը, հակահրդեհային համակարգերը, ՇՄԱՌԳ-ը:</p> <p>Համաձայնեցում: ԲԼՕԳ-երի աշխատանքային նախագիծը և 220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի նախագիծ փուլ համաձայնեցվում է Պատվիրատուի և շահագրգիռ կողմերի հետ:</p>
<p><b>220/110/10կՎ հզորության ենթակայանի Աշխատանքային Փաստաթղթեր փուլի մշակում</b></p>	<p>220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի աշխատանքային փաստաթղթեր: ճարտարապետա-հատակագծային և կոնստրուկտիվ լուծումները, էլեկտրատեխնիկական լուծումները, ցանցին միացման սխեման, տեխնոլոգիական պրոցեսի ավտոմատացված կառավարման, էլեկտրաէներգիայի ավտոմատացված ինֆորմացիոն-չափողական, կապի, դիսպետչերական և տեխնոլոգիական կառավարման համակարգերը, օպերատիվ կառավարման հանգույցը համատեղված փակ բաշխիչ սարքավորման (ՓԲՄ) 35/10 կՎ շենքում, բաշխիչ սարքավորումը (ԲՄ), Էլգազային լրակազմ բաշխիչ սարքավորում (ԿԲՄԾ), երկու տրանսֆորմատորներով, նոմինալ լարումը (Բարձր կողմ/Միջին կողմ/Ցածր Կողմ) 220/38,5/11 կՎ, օպերատիվ հաստատուն հոսանքի համակարգը (ՕՀՀՀ/ՕՍԿԿ), ուժակուտակիչ մարտկոցների լիցքավորման և վերալիցքավորման սարքերը, ռելեյական պաշտպանությունը և ավտոմատիկան, ավտոմատ կրկնակի միացումը, պահուստի ինքնավար միացումը, հակավթարային ավտոմատիկան, տեխնոլոգիական պրոցեսի ավտոմատացված կառավարումը, էլեկտրաէներգիայի ավտոմատացված ինֆորմացիոն-չափողական, կապի, դիսպետչերական և տեխնոլոգիական կառավարման համակարգերը, տրանսֆորմատորների հակահրդեհային համակարգերը</p> <p>Համաձայնեցում: 220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի աշխատանքային փաստաթղթերը համաձայնեցվում է Պատվիրատուի և շահագրգիռ կողմերի հետ:</p>

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

**Լրացուցիչ կամընտիր ծառայություն 1. Էլեկտրասնուցման արտաքին գծի, 220/110/10կՎ հզորության ենթակայանի և տարածքում գոյություն ունեցող վեց բարձրավոլտ գծերի տեղափոխման նախագծերի մշակման աշխատանքների կատարման**

Հ Հ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքի կատարման ժամկետը	Աշխատանքի ծավալ/Վճարման ենթակա գումարը /հազար ՀՀ դրամ/
1	2	3	4
1	<p><b><u>I ՓՈՒԼ</u></b>                      Ելակետային տվյալների հավաքում, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• գոյություն ունեցող ԲԼՕԳ-երի տեղափոխման ուղեծրի ընտրություն</li> <li>• նոր կառուցվող ԲԼՕԳ-ի ուղեծրի ընտրություն</li> <li>• 220/110/10կՎ հզորության ենթակայանի տեղադիրքի ընտրություն</li> <li>• համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</li> <li>• ԲԼՕԳ-երի ուղեծրերի և ենթակայանի տարածքի գեոդեզիական հանույթ</li> <li>• ենթակայանի տարածքի երկրաբանական հետազոտություն</li> </ul>	<p><b>Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում</b></p>	<p>Մինչև 58 000,0</p>
2	<p><b><u>II ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գոյություն ունեցող ԲԼՕԳ-երի տեղափոխման և վերակառուցման աշխատանքային նախագիծ</li> <li>• Նոր կառուցվող ԲԼՕԳ-ի աշխատանքային նախագիծ</li> <li>• ԲԼՕԳ-երի հենարանների տակ ինժեներաերկրաբանական հետազոտություն</li> <li>• 220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի էսքիզային նախագիծ</li> <li>• Համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</li> </ul>	<p><b>Նախորդ փուլի ավարտից 90 օրացուցային օր հետո</b></p>	<p>Մինչև 88 200,0</p>
3	<p><b><u>III ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 220/110/10կՎ հզորությամբ ենթակայանի նախագծի մշակում</li> <li>• մատակարար կազմակերպության ընտրություն Պատվիրատուի կողմից</li> </ul>	<p><b>Նախորդ փուլի ավարտից 85 օրացուցային օր հետո</b></p>	<p>Մինչև 73 500,0</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</li> <li>• նախագծի փորձաքննություն</li> </ul>		
4	<p><b><u>IV ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 220/110/10կվ հզորությամբ ենթակայանի աշխատանքային փաստաթղթերի համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</li> <li>• նախագծի փորձաքննություն</li> </ul>	<p><b>Նախորդ փուլի ավարտից 70 օրացուցային օր հետո</b></p>	<p>Մինչև 58 800,0</p>

**ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն 2. Արտաքին գազամատակարարման ցանցի նախագծի մշակման աշխատանքների կատարման**

Աշխատանք						
Աշխատանքի անվանումը	Ծածկագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը	Կատարման	
					հասցեն	ժամկետը
3		Հազ. ՀՀ դրամ	Մինչև 97 000. 0	1		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 295 օր
Տեխնիկական բնութագիրը						
Օբյեկտի անվանումը	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ նկարագիրը					
Ակադեմիական քաղաքի արտաքին գազամատակարարման էլակետային տվյալների հավաքագրում և մշակում	<p>Ելակետային տվյալների հավաքագրում: Պատվիրատուն կատարողին է տրամադրում գազիֆիկացվող տարածքի տեղադիրքը կոորդինատներով, նախնական ուսումնասիրության արդյունքում ընտրվելիք գազաբաշխիչ կայանի տարածքի վկայականը՝ էներգետիկ նշանակության, գազամատակարարումն իրականացնող կազմակերպության կողմից տրամադրվելիք տեխնիկական պայմաններ:</p> <p>Ուղեգծի և գազաբաշխիչ կայանի(Այսուհետ ԳԲԿ) տարածքի ընտրություն: Այս փուլում իրականացվելու է գազատարի անցկացման և ԳԲԿ-ի հնարավոր այն տարածքի ու հետագծի ուսումնասիրությունն ու տեղադրման եղանակը, որը թույլ է տալու գազատարի անցկացումը՝ առանց խախտելու անվտանգության կանոններն ու նորմատիվային պահանջները, միաժամանակ լինելով ամենաօպտիմալը՝ գազատարի երկարության և ներդրման համար: Ինչպես նաև ԳԲԿ-ի տեղակայման վայրը, որը կլինի թույլատրելի հեռավորության վրա շրջակա կառույցներից: Ուսումնասիրվելու են բոլոր խոչընդոտները, տրվելու են հանգույցային լուծումների սխեմաներ:</p> <p>Գեոդեզիական հանույթ: Հանույթն իրականացվելու է նախնական ընտրված ուղեգծի ամբողջ երկայնքով, ճանապարհի հատվածում՝ ամբողջ լայնությամբ, ճամփեզրին առկա բոլոր շինությունների ճակատային մասերով, իսկ դաշտային հատվածներում՝ ուղեգծի առանցքից աջ և ձախ 4մ լայնությամբ:</p> <p>Հանույթ է իրականացվելու նաև &lt;&lt;Գազպրոմ Արմենիա&gt;&gt; ՓԲԸ-ի կողմից տրամադրվելիք տեխնիկական պայմաններով նախատեսվող միացման կետը, նախագծվող կողմնատար գազատարը մինչև՝ այդ թվում ԳԲԿ-ի հավանական տեղադրման վայրը՝ մոտ 700 մ2, ինչպես նաև Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծին հարող այն հատվածը, որը գազատարի ներքին ցանցի սխեմայի արդյունքում կլինի բաշխման ամենահարմար տարածքը:</p> <p>Երկրաբանական եզրակացություն: Երկրաբանական եզրակացությունը բնակավայրային հատվածներում իրականացվելու է առկա ֆոնդային նյութերի հիման վրա, քանի որ հորատում կամ փոտրակներ փորելն անհնարին է, իսկ</p>					

	<p>բնակավայրերից դուրս հատվածներում իրականացվելու է հորատման կամ փոստրակների քանդման Եղանակով:</p>
<p><b>Ուղեգծի ընտրություն և էսքիզային նախագիծ</b></p>	<p>Էսքիզային նախագիծ: Համաձայն &lt;&lt;Գազպրոմ Արմենիա&gt;&gt; ՓԲԸ-ի կողմից տրամադրվելիք տեխնիկական պայմաններում արտացոլվող հարաչափերին միացման կետի գազատարի տրամագիծ, միացման կետում գազի ճնշում և սպառման վայրում գազի անհրաժեշտ քանակը մ3/ժ-ով արտահայտված, կատարվում է հիդրավլիկական հաշվարկ՝ այնուհետև խողովակի տրամագծի ընտրություն: Նույն կերպ հաշվարկվում է ԳԲԿ-ն սնող կողմնատար գազատարի տրամագիծը, և Նույն բեռի հիման վրա էլ հաշվարկվում ԳԲԿ-ի հզորությունն ու տեղակայման համար պահանջվող մակերեսը:</p> <p>Համաձայնեցում: Էսքիզային նախագծերը կամ գլխավոր հատակագծերը պատրաստ լինելուն պես, շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցման նպատակով, գրությունով ուղարկվում է Պատվիրատուին:</p>
<p><b>Արտաքին գազամատակարարման աշխատանքային նախագիծ</b></p>	<p>Ուղեգծի և ԳԲԿ-ի աշխատանքային նախագիծ: ԳԲԿ-ի բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ Ընդհանուր բացատրագիր, Ճարտարապետաշինարարական լուծումներ, Տեխնոլոգիական լուծումներ, Տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացում, Շանթապաշտպանություն և հողանցում, Ջեռուցում և օդափոխություն, աշխատանքների ծավալ:</p> <p>Մշակվում է գազատարի և ԳԲԿ-ի գլխավոր հատակագծերը, տեխնոլոգիական լուծումների սկզբունքային սխեմաները, որոնք համաձայնեցվում է գազահամակարգը հետագայում սպասարկող ընկերություն հանդիսացող &lt;&lt;Գազպրոմ Արմենիա&gt;&gt; ՓԲԸ-ի Երևանի ԳԳ մասնաճյուղի և &lt;&lt; Տրանսգազ &gt;&gt; ՍՊԸ-ի հետ հետ:</p> <p>Համաձայնեցման պրոցեսների հետ զուգահեռ մշակվում են գազատարի երկայնական ու լայնական կտրվածքներ, հանգույցներ, տեղային լուծումների սխեմաներ:</p> <p>ԳԲԿ-ի մասով աշխատանքներ են տարվում տեխնոլոգիական լուծումների, շինարարական, էլեկտրատեխնիկական, կոմունիկացիոն և ջեռուցման մասերի բաժիններում:</p> <p>Ուղեգծի և ԳԲԿ-ի գծագրական մասն ավարտելուց հետո կազմվում է աշխատանքների ծավալ, այնուհետև նախահաշվային փուլ՝ համաձայն աշխատանքների ծավալների:</p> <p>Կրկնակի ստուգումից հետո սկսվում է նախագծա նախահաշվային փաստաթղթերի տպելու և գրքերի կազմման փուլը:</p>

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՑԻԿ**

**Լրացուցիչ կամընտիր ծառայություն 2. Արտաքին գազամատակարարման ցանցի աշխատանքային նախագծերի մշակման աշխատանքների կատարման**

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքի կատարման ժամկետը	Աշխատանքի ծավալ/Վճարման ենթակա գումարը /հազար ՀՀ դրամ/
1	2	3	4
1	<p><b><u>I ՓՈՒԼ</u></b></p> <p>Ելակետային տվյալների հավաքում, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• նախնական ուսումնասիրության արդյունքում ընտրվելիք գազաբաշխիչ կայանի (ԳԲԿ) տարածքի վկայականը</li> <li>• էներգետիկ նշանակության գազամատակարարումն իրականացնող կազմակերպության կողմից տրամադրված տեխնիկական պայման</li> <li>• ուղեծրի և ԳԲԿ տարածքի գեոդեզիական հանույթ՝ ընտրված ուղեծրի ամբողջ երկարությամբ, 8մ լայնությամբ դաշտում և ճանապարհների հատվածում դրանց լայնությամբ մինչև հարող շենքերի ճակատները</li> </ul>	<p>Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 55 օրացուցային օրվա ընթացքում</p>	<p>Մինչև 19 500,0</p>
2	<p><b><u>II ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուղեծրի էսքիզային նախագծի մշակում և համաձայնեցում շահագործող կազմակերպության և այլ շահագրգիռ կողմերի հետ</li> <li>• Գազաբաշխիչ կայանի էսքիզային նախագծի մշակում և համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ</li> <li>• Ուղեծրի երկրաբանական հետազոտություն</li> </ul>	<p>Նախորդ փուլի ավարտից 60 օրացուցային օր հետո</p>	<p>Մինչև 19 500,0</p>
	<p><b><u>III ՓՈՒԼ</u></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուղեծրի աշխատանքային նախագծի մշակում</li> <li>• Գազաբաշխիչ կայանի աշխատանքային նախագծի մշակում</li> <li>• Նախագծային փաստաթղթերի համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ</li> <li>• Նախագծի փորձաքննություն</li> </ul>	<p>Նախորդ փուլի ավարտից 180 օրացուցային օր հետո</p>	<p>Մինչև 58 000,0</p>

**ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն 3. Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի մշակման աշխատանքների կատարման**

<b>Աշխատանք</b>						
<b>Աշխատանքի անվանումը</b>	<b>Ծածկագիրը</b>	<b>Չափման միավորը</b>	<b>Ընդհանուր գինը</b>	<b>Ընդհանուր քանակը</b>	<b>Կատարման</b>	
					<b>հասցեն</b>	<b>Ժամկետը</b>
3		Հազ. ՀՀ դրամ	Մինչև 190 000,0	1		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 335 օր
<b>Տեխնիկական բնութագիրը</b>						
<b>Օբյեկտի անվանումը</b>	<b>Կատարման ենթակա աշխատանքների համառոտ նկարագիրը</b>					
<b>Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին համակարգերի ելակետային տվյալների հավաքագրում և մշակում</b>	<p>Ջրասպառողների ճշգրտում, ջրապահանջի հաշվարկների իրականացում, ջրօգտագործման, կոյուղու մաքրված ջրերի արտանետման թույլտվությունների ստացմանը աջակցում, ուղեծրերի տարբերակային լուծումների կազմում և ներկայացում, ուղեծրերի նախնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p> <p>Ոռոգման տարածքների մակերեսների, մշակաբույսերի տեսակների ճշգրտում, ջրապահանջի հաշվարկում, ջրօգտագործման թույլտվության ստացմանը աջակցում, ուղեծրերի տարբերակային լուծումների կազմում և ներկայացում, ուղեծրերի նախնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p>					
<b>Ուղեգծի ընտրություն և էսքիզային նախագիծ</b>	Տոպոգրաֆիական և երկրաբանական հետազոտությունների իրականացում, հաշվարկների ճշգրտում, ուղեծրերի վերջնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ:					
<b>Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի աշխատանքային նախագիծ</b>	Աշխատանքային նախագծի իրականացում, մրցութային փաստաթղթերի լրակազմի պատրաստում, փորձաքննության ներկայացում և դրական եզրակացության ստացում:					

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՏԻԿ**


**Լրացուցիչ կամընտիր ծառայություն 3. Խմելու ջրի, կոյուղու և ոռոգման ջրի արտաքին մատակարարման գծերի մշակման աշխատանքների կատարման**

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքի կատարման ժամկետը	Աշխատանքի ծավալ/Վճարման ենթակա գումարը /հազար ՀՀ դրամ/
1	2	3	4
1	<p><b><u>I ՓՈՒԼ</u></b> Ելակետային տվյալների հավաքում, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ջրասպառողների ճշգրտում</li> <li>• ջրապահանջի հաշվարկների իրականացում</li> <li>• ջրօգտագործման և կոյուղու մաքրված ջրերի արտանետման թույլտվությունների ստացմանը աջակցում</li> <li>• ուղեծրերի տարբերակային լուծումների կազմում և ներկայացում</li> <li>• ուղեծրերի նախնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ</li> <li>• ոռոգման տարածքների մակերեսների ճշգրտում</li> <li>• մշակաբույսերի տեսակների ճշգրտում,</li> <li>• ջրապահանջի հաշվարկում</li> <li>• ջրօգտագործման թույլտվության ստացմանը աջակցում</li> <li>• ուղեծրերի տարբերակային լուծումների կազմում և ներկայացում</li> <li>• ուղեծրերի նախնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ</li> </ul>	<p>Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում</p> <p>Մինչև նախագծային փաստաթղթերի հանձնումը միջանկյալ՝ 30 օրվա հաճախականությամբ ներկայացնել նախնական նախագծի մշակման աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:</p>	Մինչև 38 000,0
2	<p><b><u>II ՓՈՒԼ</u></b> Էսքիզային նախագիծ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• տոպոգրաֆիական և երկրաբանական հետազոտությունների իրականացում</li> <li>• հաշվարկների ճշգրտում</li> </ul>	Նախորդ փուլի ավարտից 120 օրացուցային օր հետո	Մինչև 76 000,0

	<ul style="list-style-type: none"> <li>• ուղեծրերի վերջնական համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ</li> </ul>		
3	<p><b><u>III ՓՈՒԼ</u></b></p> <p>Աշխատանքային նախագիծ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքային նախագծի իրականացում (ներկայացված աշխատանքային նախագծի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուն ներկայացնում է դիտողություններ և առաջարկություններ)</li> <li>• մրցութային փաստաթղթերի լրակազմի պատրաստում</li> <li>• փորձաքննության ներկայացում և դրական եզրակացության ստացում</li> <li>• նախագծային փաստաթղթերի համաձայնեցում շահագրգիռ կազմակերպությունների հետ</li> <li>• նախագծի փորձաքննություն</li> </ul>	<p><b>Աշխատանքային նախագծի հանձնում 100 օրացուցային օրվա ընթացքում (աշխատանքային նախագծի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ստանալուց հետո նախնական նախագիծը լրամշակվում է 25 օրացուցային օրվա ընթացքում)</b></p>	Մինչև 76 000,0

### Հավելված 3 Նախագծի տարածք

Ակադեմիական քաղաքը տեղակայված կլինի Երևանի մերձակայքում՝ 17-րդ թաղամասի, այդ թվում՝ Հայֆիլմի տարածքում:



[Location of the Project areas outside of Yerevan, Armenia]

[Նախագծի տեղանքները Երևանի մերձակայքում, Հայաստան]